ԱՅՐԱՐԱՏ

1. ՀԱՋԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ

Կար ժամանակով մեկ հալիվոր մարդ, թոռչի էր. իրեք ախչիկ ուներ, մի կնիկ. ընդրան ուրիշ փեշակ չուներ. կէթար ձուկ բռնելու. ինչ ղդար թոռ կքցեր, հինգ հատ ձուկ կբռներ չար իրիկուն. իրիկունը հինգ հատ ձուկը վեր կալեր, կբերեր տուն. հինգ շան ին, ամենքը մեկը կուտեին։

Ըդրա կնիկը մեռավ, գնաց ուրիշ կնիկ բերեց իրա տունը։

Թոռը վե կալավ, գնաց ձկան. էլի հինգ հատ ձուկը բռնեց, վե կալավ բերեց տուն, տվեց կնկան. կնիկը հինգ հատ ձուկն էլ էփեց. մի հատը թաքուն կերավ։

Մարդը էկավ տուն, ասեց.— Կնի՛կ, ձկները բեր, ուտենք։

Չորս հատ ձուկը բերեց. էրկու հատը տվեց իրեք ախչկան՝ կերան, էրկու հատը գրեց իրանց աղաքը։

Ասեց.— Կնի՛կ, ես հինգ հատ ձուկ եմ բերե, էդ խի՞ էրկուսը տալիս ես իրեք ախչկան, բա մեկը ի՞նչ ես արե։

Ասեց.— Սոված ի՝ մեկը կերա, էգուց վեց հատ կբերես, մի հատ ավել կտամ ըդրանց։

Ասեց.— Անկարելի ա, հինգ հատից ավել չեմ կարա բերի. մեր ղսմաթը էդ ա, ըդով կառավարվենք։

2—2573

Ասեց.— Որ է՛դ էր քու ղսմաթը, էդ էր քու գրոլիկը, առավոտ քու տանը չեմ մնա։

Կասի.— Ի՞նչ պատճառով չես մնում։

— Օրը հինդ հատ ձուկ ես բերում. էդ ախչկերքը կորցրա. կէթաս էլի հինգ հատ ձուկը կբերես. էրկուսը ես կուտեմ, էրկուսը դու, մեկի կեսը ես կուտեմ, մեկի կեսն էլ դու. կուշտ կուտենք, ապրուստ կանենք։

Ասեց.— Կնի՛կ, մո՞նց կորցնեմ. իմ ջիգյարն են։

Ասեց.— Անկարելի ա, կկորցնե՛ս՝ կնիկ կըլլեմ, չես կորցնի՝ ես կկորեմ. կորեմ լավ ա, թե սովամահ ըլլեմ։

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, դու՝ քու աստված. տանե՛մ, կորցրնե՛մ. իրեք հատ աղի բլիթ թխա։

Իրեք հատ աղի բլիթ թխեց. վե կալավ իրեք ախչկան էլ, ընկան ճամփա ու գնացին. մե մեշի մեշ մտան։

Ախչիկները ասեցին.— Պապի՛, էս ո՞ւր ենք էթում։

— Ա՛յ որդի, էթում ենք ցախի։

— Էս ցախերը թուփ անենք, տանենք. բա՛ ո՞ւր ենք էթում։

— Լավ ցախի տեղ գիտամ, էթում ենք ընտի։

Գնացին, նստեցին մի տեղ, սովածացան. էդ աղի բլիթները հանեցին, կերան՝ շատ ծարավեցին։

Ախչիկները ասեցին.— Պապի՛, ծարավեցինք. ջուր ո՞ւրտի կա։

Ասեց.— Է՞յ, էն բանցը դարը տենո՞ւմ եք։

Ասեցին.— Տենում ե՛նք։

Ասեց.— Ընդրա տակին շուր կա. գնացե՛ք խմեք, էկեք, ես ըստի կնստեմ։

Ասեցին.— Պապի՛, արևը մութն ա, դարն էլ հեռու ա, ի՞նչ անենք։

— Գնացե՛ք,— ասեց,— ես ըստեղ եմ։

Էդ իրեք ախչիկն էլ գնացին դպա դարը. էդ հալիվորը ետ դառավ ու փախավ. էկավ տուն։

Կնիկն ասեց.— Ախչկերքը կորցրրի՞ր։

Ասեց.— Կորցրեցի։

Ասեց.— Թոռը վե կալ գնա ձկան։

Առեց թոռը քցեց, էրկու հատ ձուկը բռնեց. էլ ընդուց դեն, ի՞նչդար քցեց, դարտակ դուրս էկավ թոռը։ Էրկու ձուկը վե կալավ էկավ տուն, տվեց կնկան, կնիկն ասեց.— Բա էն իրեք ձուկն ո՞ւր ա։

Ասեց.— էն իրեք ձուկն ընդոնց ղսմաթն էր. էն ղտար արեցիր, որ իմ ախչկերքն էլ կորցրեցի։

Էդ հալիվորը ասեց.— էթա՛մ, իմ ախչկերքին էլի գթնեմ, բերեմ։

Գնաց, ման էկավ, չի գթավ. դարտակ հետ դառավ, էկավ դպատունը. օրն էրկու ձկով ապրուստ արեցին։

Խաբարը տանք էդ իրեք ախչկանից։ Գնացին, էն դարի տակ ջուր չի գթան, նտ դառան, էկան, իրանց հորը ման էկան՝ չգթան, իրանց ճանփեն էլ կորցրեցին։ Մի բարալիկ ճանփա ընկավ մեջի մեջին ընդրանց աղաքը. էդ ճանփեն բռնեցին ու գնացին։ Գնացին, դուս ընկան մի քաղաքի ղրաղ. ընդրանց ծարավությունը շա՛տ էր կոխե, ջուր խմեցին ու նստան։ Մութն ընկավ. սովածությունը ընդրանց շա՛տ քյար արեց, մենծ ախչիկն ասեց.— Ախչկե՛րք, էկե՛ք ցեթենք, ո՛ամ ցեթը կարճ ա՝ ընդրան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.— Ընդենց բան կըլլի՞, որ դուք ասեցիք։

Միջնեկ ախչիկն ասեց.— Բա ի՞նչ անենք, մեր հերը մեղ կորցըրեց։ մեր մեռնիլը լավ ա, քանց մեր ապրիլը։

Պուճուր ախչիկը ասեց.— Դո՛ւք գիտաք։

Նստեցին, իրեքով ցեթեցին, պուճուր ախչկա ցեթը կարճ էլավ. մենծ ախչիկն ասեց.— Դե՛, պուճուր ախչկան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.— Մե քիչ քնեք, վե կացեք, կերե՛ք։

Ընդրանք պառկան, քնան, պուճուր ախչիկը վե կացավ, աստված կանչեց, ասեց.— Ընձի աղատա ըստրանց ձեռիցը, հըմի վե կենան, ընձի պըտի ուտեն։

Նստեց, մատով գետինը փորեց, միտք էր անըմ։

Էրկու հատ չամիչ դուս էկավ գետնիցը. մի չամիչը գրեց էն քվոր բերանը, մեկը՝ էն քվոր։ Մեկ էլ փորեց, իրեք հատ դուս էկավ. մեկը քցեց իրա բերանը թեզ, մեկը էն քվոր, մեկը էն քվոր բերանը դրեց։

Ախչկերքը ասեցին.— Ա՛յ քիր, էդ ինչ ես գթնըմ։

Ասեց.— Ըստի փորում եմ, չամիչ ա դուս գալի։

Էկան իրեքով էլ փորեցին. մի լտրաչափ չամիչ հանեցին. նըստեցին, կուշտ կերան իրեքով էլ։ Էկան մեկ էլ փորեցին. մի ծակ էլավ, մի ախչիկ գոմբալով ընկավ ծակի մեջը. էդ ախչիկը թամաշա արեց՝տեհավ թաքավորի մեյտարխանեն ա. ձիանոց աղաքը չամիչը, խուրմեն, բատամի մեջը, պոպոքի մեջը՝ ուտում են։ Փեշը լիքը լցեց ու էդ ծակից դուս էկավ։

Էն ախչկերքը ասեցին.— Ա՛խչի, ո՛րտի ընկար, մենք ասեցինք կորար։

Ասեց.— Չէ՛, թաքավորի մեյտարխանեն ա, ձիանոց աղաքը լիքն էր։

Իրեքով մտան էդ ծակը, գնացին մեյտարխանեն. փեշները լիքը լցեցին, ղուս էկան։ Մի ամիս մնացին ըտեղ, իրանց ժամանակին կէթային, թոփ կանեին, կուտեին, ըտի ապրուստ կանեին։

Թաքավորը մեկ օր դուս էկավ ման գալու իրան նազիր-վեզիրի հետնա. գնացին, մտան մեյտարխանեն. թամաշա արեց թաքավորը՝ տեհավ ձիանը առրդ են. մեյտարբաշուն կաղնացրեց աղաքը, բարկացավ, ասեց.— Էս ձիանը խի են առրդ, ուրիշ ձիանոց խոտ են տալի, ես իմ ձիանոց չամիչ եմ տալի, խուրմա եմ տալի... դոռ թոփ ես անըմ՝ յա՛ քոռ տումն ես տանըմ, յա՛ գու ես ուտում. յա՛ գողը կգթնես, յա՛ գլուխդ կկտրեմ, անպատճառ չարի լիս ինձ պատասխան տուր։

Թաքավորը թողեց գնաց։ Մեյտարը բերեց, խուրմեն, չամիչը... ածեց ձիանոց աղաքը. իրան ճկիթը դանակով կտրեց, աղ ու տաքդեղը արեց յարի վրեն, մոմուռը տվեց իրան ճիկիթը. գնաց, էկավ, քունը չի տարավ։ Մեկ էլ տեհավ գոմի էն պուճախիցը վեր էկան, մինն ասեց.— Ախչի՜կ, թեզ արե՛ք. փեշերը լցրեք, որ դուս գանք։ Փեշները լըցրեցին, էկան ծակի աղաքը, որ դուս գային։ Մեյտարը էկավ, ծակի աղաքը կտրեց, ասեց.— Հը՛, ժած մի՜ գաք, իրեքիդ էլ կսպանեմ։ Ընկան ախչկերքը ըդրան աղաչանք.

— Աստծու խաթե՛ր, մենք ախչիկ ենք. բրախ տու, էթա՛նք. մեր հերը մեզ կորցրեց, էկանք, ըստեղ դուս էկանք։

Ասեց.— Ձեր խաթեր բա՛ թաքավոր իմ գլո՞ւխ կտրի։

Ասեց.— Բրախ տու՝ չենք գա, կէթանք, քաղաքի մեջ գլխներս կպահենք։

Ասեց.— Անկարելի ա, ձեզ պըտի տանեմ թաքավորին։

Մոտը չարի լիս պահեց, առավոտը լիսացավ. վե կալավ, տարավ թաքավորի պալատը, թաքավորը դուս էկավ. տեհավ մեյտարը կաղնած ա, կանչեց. ասեց.

— Հը՛, գշերով գողը բռնել ես, որ էկել ես։

Ասեց.— Հրամանք ես, բռնել եմ։

Ասեց.— Իրիկվա իմ բարկությունը չըլլեր, չէիր բռնի. ի՞նչ մարդիկ են՝ բռնել ես։

Ասեց.— Մարդ չեն, իրեք հատ ախչիկ են։

Ասեց.— Կանչեք գան, ախչկերքին։

Ախչկերքը էկան, թաքավորի աղաքը կաղնեցին։

Ասեց.— Դու ի՞նչ զտար աներկուղ ախչիկ եք, որ էդ բանը անում եք՝ որ գոմը ծակեք, ձիանոց աղաքիցը ամեն բանը վեր եք կալում, տանում. դուք ուրիշ աշխատանք չե՞ք կարա անի։

Էդ ախչկերքը իրանց գլխի էկածը պատմեցին, ասեցին.

— Մեր հերը կորցրեց, էկանք ըդտի դուս էկանք. քաղաքումը մեկ մարդի չէինք ճանաչում, որ էթայինք, աշխատեինք. աստված էդ ծակը բաց արեց մեզ համար, ըդրով ապրուստ ենք անում։ Հըմի, թաքավո՛ր ապրած, խնդրում ենք, բրախ տաս, էթանք, մեր գլուխը պահենք։

— Որ բրախ տամ, ընչո՞վ պըտի պարապեք։

Մենծ ախչիկն ասեց.

— Ինձ մե փեշակ ունեմ։

Ասեց.— Ի՞նչ փեշակ։

Ասեց.— Ես էնենց մի խալիչա կգործեմ, որ քու զոշունը նստի վրեն՝ կեսը ծալած մնա։

Ասեց.— Լա՛վ, դու էս դիհն արի։

Միջնեկ ախչկան հարցրեց.

— Քեզ ի՞նչ փեշակ ունես։

— Մի պղնձով փլավ կէփեմ, քու զոշունը ուտի, կեսն էլ մնա։

Ասեց.— Քունն էլ լա՛վ, դու էլ դեսն արի։

Էն պուճուր ախչկան հարցրեց.

— Քեզ ի՞նչ փեշակ ունես։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, ինձ փեշակ չունեմ, ոսկե քաքուլավոր տղա կբերեմ, ոսկե մազավոր ախչիկ։

Ասեց.— Էդ իրեքդ էլ ինձ պետք եք, իրեքիդ էլ բրախ չեմ տա։ իրեքիդ էլ կառնեմ ինձ կնիկ. գիտա՞ք, ի՛նչ կա, իրեքիդ որը սուտ դուս դա՝ գլուխը կկտրեմ։ Տարավ, իրեքին էլ առավ։

Մնաց մե ժամանակ, մենծ ախչկան ասեց.— Դու խալիչադ գործե՛, տենա՛մ։

Ախչիկն ասեց.— Արևելքից արևմուտք հինածդ արա, ես գործելով էթամ, գամ։

Ասեց.— Կորի՛, քունը սուտ ա դուս գալի, ընդրանց էլ նոր կըփորձեմ։

Միջնեկ ախչկան կանչեց, ասեց.

— Քվորդ խոսացրի, սուտ դուս էկավ, փլավը էփա՛, տենա՛մ քունը ո՞նց ա, սուտ ա, թե օղորթ ա։

Ասեց.— Թաքավո՞ր ապրած՝ մի պղինձ շինել տուր, քառասուն չաքչավոր միջին բանին. չաքչների ձենը ուստեքը չի լսեն։

Ասեց.— Ա՜յ հա՜յ, քունն էլ ա սուտ, դու էլ կորի՛։

Գնացին, պուճուր ախչկանն էլ կանչեցին, ասեց.— Էն էրկու քիրդ սուտ դուս էկան, քունը ո՞նց պըտի ըլլի։

Ասեց.— Իմը, ես աստծու՝ փեշն եմ բռնե, կըլլի։

Ասեց.— Որ քունը դրուստ կըլլի, ես գիտամ, դո՛ւ քու պարգևը իմ աչքի վրեն. ընդրանց պատիժն էլ իմ աչքի վրեն։

Ասեց.— Վազի՛ր, մի պառվու կանչիլ տուր։

Պառավը էկավ։ Թաքավորն ասեց.

— Կտանես, էս ախչիկը կպահես թաքավորի ծախսովը, եփոր կազատվի, ոսկե քաքուլավոր տղա կբերի, ոսկե մազավոր ախչիկ՝ կգաս աչքալիսեք, քեզ կդնեմ կշեռքի թայը, քու քաշովը ոսկի փեշ-քաշ կանեմ քեզ. տա՛ր ու լավ պահա։

Պառավը վե կալավ, տարավ. պահեց, էկավ։

Թաքավորի էրկու կնիկը ասեցին.— Պառա՛վ, մեր քիրը ազատվելու վախտը մեզի իմացրա, քեզ շա՜տ պարգև կտանք։ Ինն ամիսը թամմեց, ինները սահաթը, ցավը բռնեց. պառավը գնաց, էրկու քվորն էլ իմացրեց, էկան. մի թևը մի քիրը բռնեց, մի թևը մի քիրը, ծունկը տվեց գետինը, էրկու էրեխա բերեց՝ ոսկե քաքուլավոր տղա, ոսկե մազավոր ախչիկ։

Պառավն ասեց.

— Աչքներդ լիս...

— Ձենդ կտրա՛,— ասեցին պառավին։ Պառավը սուս կացավ. էրեխեքը մնացին ըտի, ֆողի վրա. ախչկան տարան, քցեցին տեղաշորի մեջ, էկան, պառավին ասեցին.

— Պառա՛վ, մի իլլաճ ունես՝ տե՛ս, էս էրեխեքը պըտի կորցընես։

Պառավն ասեց.— Ես ո՞նց կորցնեմ, պըտի էթամ թաքավորին աչքալիսեք։

Ասեցին.— Թաքավորն ինչ պարգև կտա՝ մենք հինգ էն ղտար կտանք։ Էրկու էրեխեն դրեցին պառավի զոգը. պառավը տարավ իրա տունը, մե զութու մեջ գրեց, զութու բերանը մուշանպեց, տա-

ռավ, քցեց ծովը, էկավ, իրա տունը, էրկու հաա թուլա կար՝ վե կալավ, տարավ, դրեց կնկա աղաքը։

Թաքավորի մեկել կնանիք ասեցին.

— Ի՞նչ արիր։

Ասեց.— Տարա՛, քցեցի ծովը. էս էրկու թուլեն վե կալա, էկա։

Հանեցին, մին-մին բուռ ոսկի տվեցին պառավին, ասեցին.

— Պառա՛վ, կէթաս, թաքավորին կասես. «Քոռ կնիկը էրկու թուլա ա բերե»։

Ըդոնք թողացին, գնացին։ Պառավ վե կացավ, գնաց թաքավորի մոտը, թաքավորը ասեց.— Հը՛, պառա՛վ, ի՞նչ կա։

— Բան չկա՛,— ասեց։

Ասեց.— Զըլլի աչքալիսեք ես էկե, իմ կնիկը աղատվել ա։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած կենա, ասելու բան չի։

Ասեց.— Ախչիկ ա՝ փառք իրան [1], տղա ա՝ փառք իրան, ասա՛, ինչ որ տվել ա. ես իմ աստվածանից շնորհակալ եմ։

Ասեց.— Ասելու բան չի՛, համա պըտի ասեմ, էրկու թուլա ա բերե։

Թաքավորը ըտի ոտը տվեց գետինը. նազիր-վազիրին կանչեց, ասեց.

— Նազի՛ր, վազի՛ր, ձեզ մի բան եմ ասըմ. էս կնանիքն, իրեքն էլ, որ ես առա, ամենքը մի փեշակի անուն տվեցին, որ սուտ դուս էկավ. էս կնիկը ասեց. «Ոսկե քաքուլավոր տղա կբերեմ, ոսկե մազավոր ախչիկ», ընգոնց փոխանորդը էրկու թուլա ա բերե. որ ըդրանը դրուստ ըլներ, պատիճ ուներ էս էրկու կնկան. ըսգոնք թե որ սուտ դուս էկան՝ խնայեցի. էդ էլ սուտ դուս գար՝ կըխնայեի, համա էրկու թուլա ա բերե, էլ խնայել չկա։ Ըսդրան ի՞նչ վճիռ տանք։

Ասեցին.— Խնդրում ենք, ըսդրան էլ խնայես. քոռ քաղաքիցը հանես, ուրիշ երկիր էթա։

Ասեց.— Անկարելի ա, վճիռ որ դուք չեք տալի, ես պըտի տամ։ Գնացեք, էրկու հատ գոմշի կաշի բերեք, մեկը քցեք տակը, մեկը վրեն, կուպրն ու ձութը հալեք, լցրեք ըդրա վրեն, կաշիքը կպչեն ըդրա ջանիցը. տարե՛ք դարվազի աղաքը գրեք, էթող դալոդը թքի էրեսին։

---

1 Աստծո (Ս. Բ.)։

Գնացին, թաքավորի ասածի պես արեցին. էթող-գալողը թքեց։ Էդ էրկու կնանիք պառավին կանչին, ասեցին.

— Պառա՛վ, բերնիցդ բան չի հանես. թաքավորն ո՛ր իմացավ՝ մեզ էլ կկորցնի, քեզ էլ։

Պառավը գնաց իրանց տուն։

Լափինը տվեց ծովը, ղութին տարավ էն էրեսը։ Էն էրեսումը մի հատ մարդ կար Ղովտ անըմավոր, ըտի մինակ բհամ էր էկել։ Ղովտին տավար, մալ, դոլվաթ շա՜տ. ձին բերեց ծովի ղրաղը ջրելու՝ տեհավ մի հատ ղութի ջրի ղրաղը, ծովի միջին ա։

Ղովտն ասեց.— Կյամի ա կոտրվե՜ր, ի՜նչ ա, էս ղութին ընկեր ա ջրի էրես, էկել ա։

Գնաց, ղութին բերեց դուս. բաց արեց, տեհավ, ըհա՛, միջին մի տղա, մի ախչիկ՝ նոր էլած։

Ղովտն չոքեց, աստված կանչեց. ասեց.

— Աստվա՛ծ, հենց ինչ ուզում ի, էն տվեցիր. քեզանից խընդրում եմ, ըսոնց կենդանություն տաս. իմ ամակը չկորցնես. ըսգոնք ինձ բախշես։— Վե կալավ, տարավ իրա տունը. մի տարի կաթով պահեց, մի տարվա. ետնա կաթից կտրեց, ընկան հացի։

Ասեց.— Իմ էրեխեքս մի տաբի բերել եմ, չեմ լեղացրե. դնեմ տաշտի մեջ, լեղացնեմ։

Դրեց, լեղացրեց, էրեխեքը հանեց. տեհավ տաշտի ջուրը սառեց՝ էլավ ղուրս ոսկի[1]։ Թաղատան Ղովտը փառք տվեց աստծուն, ուրախացավ։

Ասեց.— Ըսդա՜ր մալ, դոլվաթ ունեմ, ըսդա՜ր ոսկի ունեմ, ի՜նչ պտի անեմ, փառք քե՛զ, աստված։

Տասնըհինգ տարի պահեց կշտին. տասնըհինգ տարի ետքը Ղովտը իմացավ, որ պտի մեռնի. ախչկան ու տղին կանչեց մոտը։

Ասեց.— Որդի՛, ես կմեռնեմ։— Որ ասեց «ես կմեռնեմ», տղեն ու ախչիկը իրանց գլխին տվեցին ու լաց էլան՝ իմացան որ ըղրանից են էլե։

Ասեց.— Որդի՛, խի՞ եք լաց ըլլում։

Ասեցին.— Որ դու մեռնես, մենք ո՞նց անենք, չենք կարա ապրի։

Ասեց.— Որդի՛, ես հարուր իցցուն տարի ա՝ ընկել եմ ըստի.

---

1 Քյուլչա (Ս. Բ.)։

երկիր կա, թաքավորություն կա, ախչիկ, կնանիք կան. ամեն տեսակ բան կա աշխարքումը, էն Սև ձին տենում եք, որ օխտը կեմով կապած ա, էն ծովիցն եմ հանե, հրեղեն ձի ա. ձեր ապրանքը բարձեք ղաթիրներին, ձիանոցը, Սև ձին կքցեք աղաքը, դվո՛ը կէթա՝ հետը կէթաք, ո՛բտի կնստի՝ էնտի տեղ կառնեք, ձեզ տներ կշինեք. ձին ինչ ասի՝ խոսքից դուս չեք գա։

Ասեց ու հոգին տվեց։

Քիր ու ախպերը լաց էլան, դլխներին տվին. գնացին, տեղը փորեցին, մեկը ոտներիցը բռնեց, մեկը գլխից, տարան, քցեցին փոսն ու հողը վրա տվին։ Էկան, իրանց ապրանքը բարձեցին. Սև ձին քցեցին աղաքը, ընկան ճանփեն ու էկան-էկան, իրանց հոր քաղաքի լավ չիմանի վրեն նստեց։

Ըտի թաքավորի մեյդանն էր, ինչդար ուրախությունի օր ըլլեր, կգար, կնստեր, թամաշա կաներ. ազիզ օրը ըդուց էլ լավ մեյդան չուներ։ Բեռները ըտի վեր ածեց, քվորը թողաց բեռների մոտը, ինքը գնաց քաղաքը. տասը հատ նոքար բռնեց, բերեց քվոր մոտը. մեկը ձիանը պահեցին, մեկը տավարը, ամեն նոքարին մե գործ տվեց։

Գնաց թաքավորի պալատը. վեզիրը դռանը կաղնած էր։

Ասեց.— Էկել եմ թաքավորի մոտը, գործ ունեմ։

Վեզիրը մտավ թաքավորի մոտը։

— Մի ըսենց տղա քու մոտն ա գալի,— ասեց։

Վեզիրին ասեց.— Գնա՛ կանչա, դա՛։

Էկավ, կանչեց. գնաց, թաքավորի մոտը կաղնեց, օխտը անգամ գլուխ տվեց թաքավորին, վրա ութին ձեռը բռնեց դոշին, կաղնեց։ Թաքավորը որ տեհավ էդ տղի սրֆաթը, ոնց որ իրա սիրտը ճղեն, տղեն կոխեն սրտի մեշը։

Թաքավորը մտքի միջին ասեց. «Ես թաքավոր ըլնեմ, էս թավուր տղա չունենա՞մ»։ Ասեց. «Ինչ որ էս տղեն խնդրվի, պտի կատարեմ»։

Թաքավորն ասեց.— Ասա՛, տենամ, ա՛յ տղա, ի՞նչ խնդիրք ունես։

Ասեց.— Քու քաղաքի ղրաղը մի չիման դուզկյահ տեղ կա, էն ընձի ծախես։

Ասեց.— Էն տեղը քեզ փեշքեշ ա, գնա՛, շինա՛։

Տղեն գլուխ տվեց, որ ետ դառնար, էթար.

Թաքավորն ասեց.— Մի ղայֆա քցեք, խմենք։

Ղայֆան խմեցին, աղի հետնա էփեյճա խոսաց. ասեց.— Ի՞նչ-ղդար որ պարապ մնաս, գաս, խոսանք։

Տղեն վե կացավ, գնաց բազարը. հինգ հարուր ուստա բռնեց, հազար ֆահլա բռնեց, վե կալավ, տարավ, մի հատ ուստաբաշի էլ վերակացու դրեց, իրավունքը տվեց ըդրան։

Ասեց.— Ջափ ու ձև արա՝ օթախները, գոմերը ամեն տեսակը շինա։

Տղեն շինել տվեց, վե կացավ, էկավ թաքավորի մոտը։

Ասեց.— Իմ տները շինեցի, պրծա։

Թաքավորի էդ էրկու կնիկը էկան թաքավորի մոտը, էդ տղին տեհան։ Էդ տղեն վե կացավ, գնաց։

Թաքավորը էդ կնանոցը ասեց.— Տեղը քցեք, ես հիվանդ եմ։

Ասեցին.— Խի՞, ի՞նչ էլավ քեզ։

Ասեց.— Էդ տղեն իմ սրտի մեջը մտավ, էդ տղի սիրուցը ես մեռնում եմ, հալ չկա իմ վրեն, էդ տղի դարտը ինձ կոխեց։

Ասեցին.— Խի՞, ի՞նչ էլավ քեզ թաքավոր ապրած։

Ասեց.— Իմ արին էդ տղի վրեն ընենց քռաց, որ գիտամ ինձանից ա, քաշկա էդ տղեն չէթա, գշեր-ցերեկ իմ հետը խոսա, իմ սիրտը կբացվի։

Թաքավորին պառկացրին, շորերը քցին վրին. թաքավորը քնեց, վե կացան գնացին, իրանց միջին խորհուրդ արեցին. «Կասես, էս մեր քվոր տղեն ըլլի»։

Պառավին կանչեցին, էկավ։

Ասեցին.— Դինսը՛զ, իմանսզ պառա՛վ, գիտաս քու գլուխը ի՞նչ կհանենք։ Արի՛, դրուստն ասա՛, էն էրեխեքը տարար քցեցի՞ր ծովը, ի՞նչ արիր, բհամ են էկե. քիչ ա մնըմ թաքավորն իմանա, որ իմացել ա, մեզ պրծնում չկա, զաթի ինչ իլլաճ ունես, տե՛ս։

Ասեց.— Իմ վրա խի՞ եք բարկանում, էն էրեխեքը դրել եմ ղուբու մեջը, մուշանպել եմ, քցել եմ ծովը, էսա տասնըհինգ, տասնվեց տարի ժամանակ ա անց կացե. հըմի կէթամ, է՛ն տեղը կղրկեմ, որ էլ գալը չըլլի։

Հանեցին, ամենքը մի-մին բուռ ոսկի տվեցին։ Ասեցին.— Վե՛ գնա, վախտով ըռատ արա՛։

Պառավը վե կացավ ու գնաց. գնաց, ըդրանց քուչի դուռը ծեծեց. ախչիկը գնաց, բաց արեց դուռը։

Ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն։

Ասեց.— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Գնա՛, էթանք ձեր տները ման գանք, տենանք ո՞նց տներ են շինե։

Ասեց.— Արի էթա՛նք, նանի ջան։

Տարավ պառավին ամեն տեղը, օթախները, մառանը, գոմերը, ձիրատի ման ածեց։

Ասեց.— Բալա՛, ամեն բանը լավ ա, մինակ ես, ափսոս։

— Բա ի՞նչ անեմ, նանի՛։

Ասեց.— Ախպորդ ասա՛, Հազարարիլբուլը բերի, ըստի երգի, դու անկաջ անես։

Պառավը թողեց գնաց. ախչիկը նստեց, նոթերը կիտեց։

Ախպերը էկավ, տեհավ քվոր նոթերը կիտած ա։

Ասեց.— Ախչի՛, խի ես նոթերդ կիտե, փառք աստծուն, թամաշա եմ անում՝ սկի պակասութուն չկա։

Ասեց.— Խի՛ չիկա։

Ասեց.— Ի՞նչն ա պակաս։

Ասեց.— Մի Հազարաբիլբուլ ըլլի, երդի, ես անկաջ անեմ։

Ասեց.— Ա՛յ քիր, ես ոչ Հազարաբիլբուլի ձեն եմ լսե, ոչ տեղը գիտամ։

Ասեց.— Որտիան ըլլի՝ պտի բերես։

Ասեց.— Էթամ Սև ձիու մոտ, տենամ։

Գնաց, գոմի դուռը բաց արեց, մտավ գոմը. ձին խրխնջաց։— Հա՛,— ասեց,— թաքավորի տղա, ի՞նչ կա։

Ասեց.— Հազարաբիլբուլը բերենք։

Ասեց.— Ա՛յ քու սարվացնողի շլինքը կոտրվի. Ղովտը, որ ինձ տվեց քեզ, ասեց ինձ. «էս տղի հետ կմեռնես, էս տղի հետ կապրես»։ Հըմի քու հետ պտի մեռնեմ, քու հետ պտի ապրեմ. գնա՛, օխտը փութ գարի բե՛ր, ածա՛ իմ աղաքը՝ ես մի լավ ուտեմ։— Օխտը փութ գարին ածեց աղաքը։

Ասեց.— Մի լավ թիմարա ինձ։

Մի լավ թիմարեց։

Ասեց.— Թամքը վրես դիր, ղոլանները ղայիմ կապա, Երկու հատ աքլորաճուտ առ, ոտդ դի՛ր զանկուն ու նի՞լ վրես։—Ոտը դրեց զանկուն ու նիլավ։

Ասեց.— Թաքավորի տղա՛, ընենց ջուխտ գանկոս տուր փորիս,

որ իմ մոր ծծած կաթը գա իմ բերանը։ Ջուխտ զանկուն տվեց, մոր ծծած կաթը էկավ բերանը, հանեց ֆալաքի օխտը ղաթը. վե կալավ, տարավ, տարավ մի փոշտ, ձին բեզարեց։

Ասեց.— Տղա՛, վեր արի, ինձ ման ածա։

Ման ածեց. տեհավ էն դհիցը մի Սև դև էկավ, էրկու ջաղացաքար առել ա ձեռը, ծափ տալով գալիս ա։

Ձին ասեց.— Ա՛յ տղա, թեզ արա՛, ոտդ դիր զանկուն, նի՛լ, Սև դևն էկավ։

Սև դևը ասեց.— Աշե՛մ, աշե՛մ, քեզ որ ատամիս տակը ճաշ անեմ, դնեմ ատամիս տակը, ըսկի չես էրևա։

Ձին ասեց.— Ա՛յ տղա, զանկուն տո՛ւր, հավալամիշ ըլնեմ, թե չէ ըղրա ձեռիցը չես պրծնի։

Զանկուն տվեց, հանեց ֆալաքի մի ղաթը։ Դևը ջաղացաքարը շպոտեց քամակիցը։ Գյուլլի պես գնաց, սաղրուն դպավ։ Տարավ, մի բաղչի ղրաղ վե դրեց։

Ասեց.— Ըտի ղլիճ օթի կա, քաղա՛, դի իմ սաղրու վրեն, որ սաղանա։ Ալբեալը քաղեց, ծամեց, դրեց յարի վրեն, սաղացավ։

Ասեց.— Դե՛, կմտնես էդ բաղչի մեջ. մարմար հավուզ կա, Հազարաբիլբուլը էդ հավուզի վրա կախ տված ա, Հազարաբիլբուլի ղաֆասը վե կալես. մի հատ կանանչ վարդենի ճիպոտ կա տնկված, էն էլ կհանես, կբերես. ո՛ր ձեն տան, ասեն. «Հազարաբիլբուլը տարա՞ն», ետ չի թամաշա անես, որ ետ թամաշա անես, քար կկըտրես։ Էրկու աքլորաճուտն բանցը քցա, թե կանչեցին՝ խեր ա, կպրծնենք ըստիան, թե չի կանչեցին՝ չենք պրծնի։— Էրկուան էլ բանցը քցեց, էրկուան էլ կանչեցին։

Ասեց.— Գնա՛, իմ ասածը կատարա ու արի, էլ մի վախենա։

Գնաց, ղաֆասը վե կալավ, վարդի ճիպոտն էլ հանեց, ձեն տվին. «Հազարաբիլբուլ տարա՞ն, տարա՞ն»։

Ետ թամաշա չարեց. էկավ, հասավ ձիուն, ձին ասեց.— Դե՛, ոտդ դիր զանկուն ու նի՛լ։— Նիլավ։

Զանկուն տվեց, հանեց ֆալաքի օխտը ղաթը. բերեց, իրանց դռանը վեր դրեց։ Ասեց.—Դե՛, տար, ճիպոտը բաղչի մեջտեղ տնկա։

Տարավ տնկեց. Հազարաբիլբուլի բաղչի մեջ ինչ կար՝ ըդի էլավ։ Բիլբուլը հավուզի վրիցը կախ տվեց. ըդի երգեց. ո՛վ որ լսում էր, հայպաթ էր կտրում ըդրա քաղցը ձենին։ Էդ ախչիկը գշեր-ցերեկ թամաշա էր անում էդ բիլբուլին։ Տղեն դուռ էկավ, գնաց

ավ անելու. թաքավորն էլ դուս ա էկե ավ անելու. տղեն տվեց մի ջեյրանի ճուտի՝ ճուտը գնաց, թաքավորի աղաքը վեր ընկավ. տղեն գնաց, թաքավորի աղաքիցը վե կալավ. թաքավորը ըսկի չի խոսաց։

Ասեց.— Նազի՛ր, վեզի՛ր, էլ ետ դառեք, էլ ավ անիլը չուզի։ Նտ դառան, էկան։

Թաքավորն ասեց.— Իմ տեղաշորը քցա՛, ես մեռա։

Կնանիքը ասին.— Խի՛, ի՞նչ էլավ։

Ասեց.— Էն տղեն մի ջաբաթ էր չէր էրեվում. էսօր էկավ, ավը իմ աղաքիցը վե կալավ, գնաց, հետս մի բերան էլ չխոսաց։

Կնանիքը պառկացրին, դպա պառավին գնացին։

Ասեցին.— Պառա՛վ, էդ ո՛բտի ղրկեցիր, էլի էկել ա։

Ասեց.— Հըմի կէթամ, էն տեղը կղրկեմ, որ չի գա։ Մի-մի բուռ ոսկի տվեցին։

— Գնա,— ասեցին,— մի՛ կաղնի էլ։

Պառավը գնաց, ըդոնց գուռը ծեծեց, ախչիկը էկավ, դուռը բացեց։

Պառավը ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն։

Ասեց.— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Հազարաբիլբուլը բերե՞լ ա։

Ասեց.— Բերել ա։— Վե կացան, գնացին տեհան։— Ա՛յ հա՞յ,— ասեց,— ով էթում էր՝ չիր գալի, էս ո՞նց բերեց։— Գիտաս ի՞նչ կա, բալա ջա՛ն։

— Ի՞նչ կա, նանի ջա՛ն։

Ասեց.— Որ էթա, Դուլդուլ մատիանը բերի՝ օխտը քուռակ ունի, օխտը քուռակի յալին օխտը մազ կա, օխտը մազը օխտը մուղամ ձեն ա հանըմ։

Պառավը գնաց, իրիկունը ախպերն էլ էկավ տունը.

— Խի՞ ես նոթերդ կիտե,— ասեց քվորը։

— Գնա՛, Դուլդուլ մատիանը բեր, օխտը քուռակ ունի, ամեն քուռակի յալին օխտը մազ կա, օխտը մազը օխտը մուղամ ձեն ա հանըմ։

Տղեն գնաց ձիու մոտ։

Ձին ասեց.— Հը՛, ի՞նչ կա, թաքավորի տղա՛։

Ասեց.— Պըտի էթանք՝ Դուլդուլ մատիանը բերենք։

Ասեց.— Քու սարվացնողի վիզ կոտրի, էն իմ մոքոր ախչիկն ա. մորից էլավ, անըմը դրեցին Դուլդուլ, հըմի մեծացել ա, քանի

տարի ա ես հեռացել եմ։ Դե՛,— ասեց,— գնա՛, օխտը հատ քեչա առ, օխտը գոմշի կաշի առ, օխտը փութ էլ ձութ ու ծամոն առ, հալա, կպցրա իմ տկլոզ ջանին, մի քեչա քցա վրես։—Մի քեչան քցեց վրեն, մի ղոլանով կապեց՝ օխտը քեչեն էլ օխտը ղաթ կպցրեց, ղոլանները քաշեց. թամքը դրեց վրին, օխտը փութ դարին ածեց աղաքը. ձին կերավ, ոտը դրեց զանկուն, նիլա՜վ։ Մի ջուխտ ղանկու տվեց. հանեց ֆալաքի օխտը ղաթը. գնաց, մի ծովի ղրաղը վեր էկավ. տեհավ մի ամարաթներ կա՜, որ օխտը ատեժ ա։

Ասեց.— Ա՛յ տղա, ծովի էն էրեսը պըտի էթանք. Կարմիր դևը կգա, մենք չենք պրծնի, թեզ արա՛։ Մեկ էլ տեհան Կարմիր դևը էկավ, մի գերան ա դրել ուսը, իրեք վերստ ա դրա երկարությունը, գալիս ա։

Ասեց.— Ա՛յ տղա, ոտդ դիր զանկուն, նի՛լ։— Նիլավ։

Կարմիր դևը ձեն տվեց.— Կացե՛ք, ղոնախ էլեք, նո՛ր գնացեք։ Տղեն ականջ չարեց, զանկու տվեց։ Զանկու տալու բաշտան վեր կալավ տղին, որ վեր կալավ, գերանը ջրինտի պես քցեց ըդրա քամակը, չի հասավ, գնաց ծովի մեջտեղը ընկավ։ Տարավ, աղին ծովի էն էրեսը վեր դրեց.

— Քու թատարիքը տե՛ս, ես կմտնեմ ծովի տակը. փրփուրը թե կարմրեց՝ կփախնես, էլ քե պրծնում չի կա, թե սիպտակեց՝ ուրախացի։ Ձին գլուխ-կոնծի արեց, գնաց ջրի տակը, մի սահաթ ըդենց ծովի տակը մնաց։ Թամաշա արեց, տեհավ փրփուրը կարմրեց՝ տղեն թողեց, փախավ. ըտեղան մի կես սահաթի ճանփա գնաց, նաֆասը կտրավ։

Ասեց.— Ես ո՞ւր եմ փախնըմ, իմ արինը Սև ձիու արընից ավե՞լ ա. ընդրան սպանեցին՝ ինձ էլ սպանեն։ Ետ դառավ, էկավ էլի. տեհավ, փրփուրը սիպտակըմ ա, շատ ուրախացավ։ Տեհավ որ Դուլդուլ մատիանի յալից բռնեց, քաշեց դուս։

Ասեց.— Ա՛յ տղա, նոխտեն քցա ըսդրա գլուխը։ Նոխտեն գցեց, կապեց։

Տեհավ օխտը քուռակն էլ ծովու միջից դուս էկան, հաղ արեցին։

Ասեց.— Ա՛յ տղա, հը՛, ի՞նչ տեհար։

Ասեց.— Տեհա փրփուրը կարմրեց։

Ասեց.— Տենըմ ե՞ս գլխիս, ճակատիս տվեցին։

Ասեց.— Բա ո՞ւր ա քու օխտը քեչեն։

— Տվեցին պոկեցին. էդ թամքը դիր վրես, նի՛լ. նոխտեն դալիմ բոնա, ինձ հետ քշա։

Քշեց ծովի էրեսովը, օխտը քուռակն էլ քամակիցն էկան. բերեց, իրանց դռանը կաղնացրեց. դուռը ծեծեց՝ քիրը դուռը բաց արեց։

Սև ձին ասեց.— Մատիանը բրախ տո՛ւ, էլ փախնողը չի։

Բրախ տվեց, քուռակներն էլ հաղ արեցին, ըդրանց օխտը մազնրիցը՝ օխտը մուղամ ձեն էր դուս դալի։

Տղեն վե կացավ, գնաց բազար։ Թաքավորը փանճարից թամաշա արեց, տեհավ՝ էն տղեն ա։

— Հե՞յ վա՞խ, ֆալաք,— ասեց,— ես թաքավոր ըլլեմ, էս թավուր տղա չունենամ, էս էլ չի կաղնըմ ինձ հետնա խոսա։

Թաքավորը իրա էրկու կնկանն էլ կանչեց, ասեց.— Մի ղայֆա բերե՛ք, ես խմեմ, պառկեմ. էն տղեն էս օր տեհա, իմ դարտը թաղացավ։ Կնանիքը վռազ, վռազ ղայֆան տվեցին. թաքավորը խմեց, պառկեց։

Կնանիքը գնացին պառավի կուշտը։

Ասեցին.— Պառա՛վ, բոլ չի էս օղիյեն բերես մեր գլուխը։

Ասեց.— Խի՛, ի՞նչ ա էլե։

Ասեցին.— Էն տղեն էկել ա։

Ասեց.— Էթա՛մ, էն տեղը ղրկեմ, որ էլ իլլաճ չըլլի գալու։

Ամենքը մի բուռ ոսկի տվին։ Պառավը գնաց, դուռը ծեծեց։ Ախչիկը դուռը բացեց։

— Հա՞, բարև բալա շանա։

— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Դուլդուլ մատիանը բերե՞ց։

Ասեց.— Բերել ա։

Ասեց.— Էթա՛նք տեսնանք։— Տեհավ քուռակները էնպես են ջգիր տալի, մի բոպա մի տեղ չեն կաղնըմ։

Ասեց.— Բալա ջա՛ն, տեսնըմ ես քու նանը. ինչ լավ նան ա, ղրկեցի Հազարաբիլբուլը բերեց, ղրկեցի Դուլդուլ մատիանը բերեց։ Հըմի Հազարաբիլբուլը որ երգում ա, գիտամ, չես հասկանում, Դուլդուլ մատիանի քուռակների մուղամ ձենները որ հանում են, էդ էլ չես հասկանում. բա որ էթա Գյուլ փարին բերի, որ քե պես մե ախչիկ ա, ինչ որ ասի՝ դու կհասկանաս. կըլլի քեզ հարս, իրան կնիկ։

Պառավը գնաց։ Իրիկունը ախպերը էկավ տուն, տեհավ քվոր նոթեբը կիտած ա։

Ասեց.— Ա՛յ քիր, հըմի ի՞նչ ա պակաս։

Ասեց.— Ո՛չ Հազարաբիլբուլի ձենն եմ հասկանում, ոչ էլ Դուլդուլ մատիանի քուռակների մուղամ ձենները։ Գնա Գյուլ փարին բե՛ր, որ ինձ հարս ըլի, քեզ էլ կնիկ, ինչ որ ասի, ես հասկանամ։

Տղեն գնաց Սև ձիու մոտը։

Զին ասեց.— Հը՛, ի՞նչ կա։

Ասեց.— Էթա՛նք, Գյուլ փարին բերենք։

Ասեց.— Քու սարվացնողի շլինքը կոտրվի. դե, գնա՛, օխտը փութ գարի բե՛ր։

Գարին կերավ, ասեց.— Մի լավ շահթիմար տուր ինձ, թամքը դիր վրես, մի շուխտ զանկոռ տուր, իմ մոր ծծած կաթ դա իմ բերանը։

Էդպես արեց, ձին հանեց ֆալաքի օխտը ղաթը, տարավ մի բաղչի դուռ վեր դրեց, մտավ նեքսև։

Գնաց, ետ արած դռները բաց արեց, բաց արած դռները ետ արեց, տեհավ Գյուլ փարին քյարդահ ա անըմ։

Ասեց.— Գլխիդ ղուրբա՛ն, արևիդ ղուրբա՛ն, քու էշխիցդ եմ էկե։ Իրեք անգամ ասեց, էն չխոսաց. վրա չորսին ասեց.— Մոնց որ էկել ես՝ ընենց գնա, չըմ ղմըշըմ քեզ։

Ասեց.— Հնար չի կա ղմըշես, չի ղըմըշես, քեզ պըտի տանեմ։

Ասեց.— Որ իմ էշխիցս ես էկե, չարի ծնկներդ քար դառնաս։— Չարի ծնկները էլավ քար։

Ասեց.— Ես քու սերի խաթեր էկել եմ։

Ասեց.— Դոռ չարի ծնկներդ էլեր ես քար, հալա խոսում ես. չարի պորտդ էլ ըլես քար։— Չարի պորտը էլավ քար։

Էլի ընկավ աղաչանք, ասեց.— Պըտի գաս, էթա՛նք։

Ասեց.— Չարի շլինքդ ըլես քար։

Զին էլ էլավ չարի շլինքն քար, ինքն էլ։

Ասեց.— Ա՛յ տղա, ուրիշներին մեկ անգամ ասելուն քար էի շինում, վեր քցում, քեզ չեմ ղմշում. քու ոսկե քաքուլը որ փռվեց էդ քարի վրա, իմ շիգյարը մղկտում ա, քեզ որ լավացնեմ՝ կէթա՞ս, թե էլի իմ յախեն պըտի բռնես։

Ասեց.— Պըտի բռնեմ քու յախեն, կուզես լավացրա, կուզես շինա քար, վերջանամ։

Ասեց.— Դե՛, քարի միջից դուս արի ու արի։

Դուս էկավ ու հասավ Գյուլ փարուն. խարտեց, պաչպչեց՝ էլ ընդրան, էն ընդրան։

Զին էլ ընտի ուրախացավ, ոտնաքանդ արեց։

Ախչիկն ասեց.— Ա՛յ տղա, ես իրավունք եմ տալի քեզ, փունջ մանուշակն առ, ո՛ր քարին տաս՝ կսաղանան։

Առավ, ո՛րին տվեց՝ սաղացավ, որին տվեց՝ սաղացավ. էլավ տաս հազար մարդ ձիավոր, խառնվան բիրատի իրար։ Գյուլ փարին իրավունք տվեց.

— Դե՛ ամեն մարդ իրան ձին նիլնի ու էթա իրա տունը։ Քոմ-մա գնացին, մնաց էդ Գյուլ փարին ու էդ տղեն։ Գյուլ փարուն վե կալավ, գնաց ձիու մոտը. նիլավ ձին, ախչիկը քաշեց թարքը։

Զին ասեց.— Ա՛յ տղա, մի լավ զանկու տո՛ւր ընձի. իմ մոր ծծած կաթը գա իմ բերանը։— Հանեց ֆալաքի օխտը ղաթը, ծովի էն ղրաղը վե դրեց։ Նստեցին, հաց կերան, պրծան. ձին բերեցին, որ նիլնեին, մեկ էլ տեհան Բոզ դևը մի ծառ ա ղրե ուսին, ինչդար ղուրտ ու ղուշ, ջանավար կա, կախ արե ծառի վրեն, դրել ա ուսը. մի պռոշը երկինքն՝ա սրբում, մի պռոշը՝ գետինը. էկավ, ըդոնց տեհավ։

Ասեց.— Էս զտար ջանավարի մեջ մեկը իսանի մսի պես քաղցր չըլլի՞, աստված ըսօր ջուխտն ա հասցրե։

Զին ասեց.— Տղա՛, թեզ արա՛, նի՛լ, դևն էկավ, թուի իմ քա-մակը։ Թռավ ձիու քամակը, ախչկա թևիցը բռնեց, քաշեց թարքը։ Դևը էն դիհեն ձեն տվեց.

— Կադնե՛ք, ձեզ բան եմ ասըմ։

Զին ասեց.— Իմ կողքերին մի ջուխտ զանկու տո՛ւր։

Որ տվեց, ձին վե կալավ ըդրանց։ Դևը տեհավ, ծառը տվել գետնովն ու ձիու քամակիցը վազեց. հասավ, ձեռը քցեց, որ ձիու ոտը բռներ՝ ձին մի ջուխտ քացի տվեց ճակատին, դևը տասնէրկու կունդկի արեց ու վեր ընկավ։ Զին տարավ իրան դռան աղաքը վե դրեց։ Դուռը ծեծեց, քիրը բաց արեց, փաթթվեց ախչկան. էլ իրար պաչպչի՞լը աստված աղատի։

Էկան, բաղչեն ման էկան, Գյուլ փարին ասեց.

— Ա՛յ տղա, գնա՛, ուստա բեր, մարթապեք շինի։

3--2573

Գնաց, ուստեն բերեց, ոսկին տվեցին, իրա ձեռի մուզդը տվին։

Ասեցին.— Տաս հազար ոսկե մարթապա շինա։— Շինել տվին, լրծան։ Գյուլ փարին մի դաստա ծաղիկ կապեց, տվեց տղին։

Ասեց.— Էն գոմշի կաշու միջի կնիկը որ կա՝ տա՛ր տուր էն կնկա ձեռը։

Ծաղիկը վե կալավ, տարավ, տվեց կնկա ձեռը. կնիկն առավ, թամաշա արեց, տղին էլ բան չի կարաց ասի, հենց ասեց.— Ես մեռա՞, մեռա՞։

Տղեն էկավ թաքավորի պալատի տակով տուն. թաքավորը տեհավ.

— Նազի՛ր, վեզի՛ր,— ասեց,— էս էրկու շաբաթ էդ տղեն իմ աչքովը չէր ընկե, էս սհաթը կբերեք, ընձի հետ խոսա։

Գնացին ասին.— Թաքավորը քե կանչում ա։

Գյուլ փարին ասեց.— Էգուց թաքավորը էս վախտը մեզ ղոնախ ա, տղեն չի կաբա գա։— Էկան, թաքավորին ըդենց պատասխան տվեցին։

Թաքավորը շատ ուրախացավ։ Թաքավորի էրկու կնիկը թաքավորին քուն դրեցին, ափալ-թափալ գնացին իրանց օթախը, պառավին խաբար ղրկեցին։

Ասեցին.— Դինսը՛ղ, իմանսը՛ղ, էդ որտե՞ղ ես ղրկե, էկավ։— Ասեցին.— Դե՛, գնա էս սհաթը ղրկիլ տո՛ւր, որ էթա։

Ասեց.— Իրեք տեղ ղրկեցի՝ էկավ. հրմի ընենց տեղ պըտի ղրկեմ, էլ հնար չի կա գալու։

Պառավը գնաց, դուռը ծեծեց, ախչիկը դուս էկավ։

Ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն , մո՞նց ա, Գյուլ փարին բերել ա՞։

Ասեց.— Նանի ջա՛ն, բերել ա, բա ի՞նչ ա արե։

Գյուլ փարին ասեց.— Նանի՛, արի՛, ընձի հետ խոսա։

Ասեց.— Քեզ բերել տվեցի, մի տեղ էլ պըտի ղրկեմ։

Ասեց.— Ըսդրանց գլուխը ինչ բալբալեք էկել ա, քեզանով էկել ա, պառա՛վ։

Ասեց.— Խի՞ ընձանով էկել ա, ընձանով լավություն ա հասե։

Ասեց.— Որ թողամ, շատ կխոսաս դու. ըլլե՛ս մի ցոոտ ցախավել, ընկնես ըստեղ։— Էլավ մի ցոոտ ցախավել։

---

1 Հախք (Ս. Բ.)։

— Աթչի՛,— ասեց,— տար քցա՛ գոմը, ձիու տակը։— Տարավ. քցեց գոմը։ Տղեն նեքսև մտավ։

Գյուլ փարին ասեց.— Արի՛, քեզ դարտ ու բալից աղատեցի, գնա բազարը՝ տասը հատ տավար ա՛ռ, էրկու խալվար բրինձ, կես խալվար եղ. բե՛, քու հոր ու մոր ժամ-պատարագ արա։— Գնաց էդպես արեց։ Տավարները մորթել տվեց, կերակուրները էփել տվեց, ղրկեց, մարգիկը թոփ արեց. տղեն էլ թաքավորին կանչեց։ Թաքավորը էն սհաթը էկավ, էլ մահալ չի թողաց։ Թաքավորի կնանիքը մարթ ղրկեցին պառավին, տեհան պառավ էրեկվանից չի կա. ըդոնց սիրտը ճաքում էր. իլլաճ չկա ձեռին։ Գնացին, նստան։ Հացը քաշիլ տվեցին, կերան. իրանց աղաքի ոսկե մարթապեքն էլ, տղեն հրամայեց, վե կալան, քոմմա գնացին։ Թաքավորը մնաց, շատ ուրախացավ, երկար խոսացին։ Թաքավորը տղի ու աթչկա բերնին մայիլ կտրեց, ասեց.— Ինչ ուզում եք, ձեր լեզուն ինչ պտրտի՝ պըտի տամ։

Գյուլ փարին ասեց.— Քեզանից զատ չենք խնդրում, մի բան ենք ուզում։

Ասեց.— Մի անգամ ասել եմ, ուզա՛։

Ասեց.— Մենք էն դարվազի կապած կնիկն ենք ուզում, տաս մեզի։

Ասեց.— Դուք բան ուզեք, էդ ի՞նչ էր։

Ասեց.— Մենք էն ենք ուզում։

Ասեց.— Դե՛, ձեզ ըլլի։

Թաքավորը պալատը գնաց, կնանոնցը ասեց.— Ընձնից զատ չուզեցին, էն կնիկը ուզեցին։

Կնանիքը շատ տրտմեցին։ Գյուլ փարին ու աթչիկը գնացին, էդ գարվազի կնկանը դրեցին ուսերին, տարան համամը. տասն օր գրեցին ջրի մեջ, անճախ ըդրա կաշին կակղեց. մի լավ լեղացրին, բերեցին տուն. մի ձեռք էնպես շոր կտրեցին, ըսկի էդ քաղաքում չի կար, հագցրին ըդրան։

Փարին ասեց.— Մեկ էլ ժամ արա քու հորն ու մորը։

Տղեն մեկ էլ էդպես պատրաստեց. կանչեց, էկան՝ ինչդար մարթ կար։

Փարին ասեց.— Գնա՛, թաքավորին էլ կանչա։

Թաքավորը կնանոնցը ասեց.— Դե՛, վերե՛ք, էթա՛նք։

Կնանիքը ասեցին.— Մենք գանք ի՞նչ անենք, թաքավո՛ր։

Թաքավորը բարկացավ.— Դե՛, թեզ արեք,— ասեց։

Վե կացան գնացին, մտան նեքսև։ Էդ ախչիկն ու Փարին էկան, թաքավորի ձեռը բռնեցին, տարան։

Թաքավորը ասեց.— Ա՜յ հա՜յ, ես թաքավոր ըլեմ, էս թավուր ախչկերք, էս թավուր տղա չունենամ։

Նմակը քաշեցին. կերան, պրծան։

Տղեն ասեց.— Ամեն մարթ իրան առչեի ոսկե մարթապեն վեր կալի։

Վե կալան, գնացին։ Թաքավորը, իրա կնանիքը մնացին։

Գյուլ փարին ասեց.— Ախչի՛, գնա՛, էն ցախավելը գոմիցը վե կալ ու բեր։— Գնաց, վե կալավ, բերեց։

Ասեց.— Ախչի՛, դիր թաքավորի աղաքը։

Թաքավորը նեղացավ իրա միչին, ասեց.— Ձեր պատիվ տալը ասեմ, թե էս վերջի բանը ասեմ։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, մի՛ նեղանա, ինչ որ բան կա, էդ ցախավելը կասի հըմի։

Փարին ասեց.— Ցախավե՛լ, էլի՛ պառավ։— Էլավ պառավ։ Նըստեց ըտեղ։

Թաքավորը ասեց.— Ցա՜, էս մեր տան պառավն ա։

Ասեց.— Դե՛, պառավ, ի՛նչ տեհել ես՝ պատմա։

Պառավը ինչ որ էլել էր, ամենը թաքավորին պատմեց։

Գյուլ փարին ասեց.— Տենը՞մ ես ոսկե քաքուլավոր տղեն ու ոսկե մազավոր ախչիկ, էս կաշու միչի կնիկը ըղրանց ի՞նչն ա։

Ասեց.— Ըդրանց մերն ա։

— Թաքավորը ըդրանց ի՞նչն ա։

Ասեց.— Հերն ա։

Ասեց.— Պառա՛վ, դու խի՞ իր էդպես հանըմ ըդրանց գլուխը։

Ասեց.— Ինչ որ անըմ ին, էդ էրկու կնանիքն ին անըմ։

Թաքավորը վե կացավ, ոտը գետնով տվեց։

Ասեց.— Պառավ, ըդոնք որ անըմ ին, դու խի՞ արեցիր։

Պառավին տարան, քցեցին ծովը։ Էրկու գիժ ղաթիր բերել տվեց, էդ էրկու կնկան՝ ամենքը էրկու ղաթիրի պոչը կապեց։

Թաքավորն իրա կնկան առավ թազատան։ Փարուն տղի վրա պսակեց։ Ինքը թաքավորությունից վեր էկավ, տղին դրեց իրա տեղը։